

3651

Ի. ՍՏԱԼԻՆ


ՏՆՏԵՍԱՎԱՐՆԵՐԻ  
ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ



3K33

S-77

ՊԵՏԼՐԱՏ — ԲԱՂԱԲԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ ● 1938



Апр.  
3-1466a  
3K33  
5-77

28 JUN 2005

20 NOV 2009

# Ի. ՄՏԱԼԻՆ

## ՏՆՏԵՍԱՎԱՐՆԵՐԻ ԻՆՎԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հառ Սոցիալիստական արդյունաբերության աշխատողների  
առաջին համախուրժենական կոնֆերենցիայում  
1931 թ. փետրվարի 4-ին



18

ՀՊԵ. № 5846  
ՊԵՏՂՐԱՏ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ ● 1938

- 5 AUG 2013

3651

### ՏՆՏԵՍԱՎԱՐՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հառ Սոցիալիստական արդյունաբերության աշխատողների առաջին  
համախորհրդային կոնֆերենցիայում 1931 թ. փետրվարի 4-ին

Ընկերներ: Ձեր կոնֆերենցիայի աշխատանքները մոտենում են վախճանին: Այժմ դուք բանաձևեր եք ընդունելու: Ձե՛մ կասկածում, վոր նրանք միաձայն կընդունվեն: Այս բանաձևերում, —յես նրանք դիտեմ մի քիչ, —դուք հավանություն եք տալիս արդյունաբերության 1931 թվականի վերահսկիչ թվերին և պարտավորություն եք հանձն առնում նրանք կատարելու:

Բոլշևիկի խոսքը լուրջ խոսք է: Բոլշևիկները սովոր են կատարելու այն խոստումները, վոր տալիս են իրենք: Բայց ի՞նչ է նշանակում 1931 թվականի վերահսկիչ թվերը կատարելու պարտավորություն: Այս նշանակում է՝ ապահովել արդյունաբերական արտադրանքի ընդհանուր աճը 45%-ով: Իսկ այս շատ մեծ խնդիր է: Այս դեռ քիչ է: Այսպիսի պարտավորությունը նշանակում է, վոր դուք վո՛չ միայն խոստում եք տալիս մեր հնգամյակը 4 տարում կատարելու, —այս արդեն վճռված բան է, և այստեղ այլևս վո՛չ մի բանաձև հարկավոր չէ, —այդ նշանակում է, վոր դուք խոստանում ե՛ք հնգամյակը կատարել արդյունաբերության հիմնական, վնասողական նյութերի վերաբերմամբ 3 տարում:

Այդ լավ է, վոր կոնֆերենցիան 1931 թվականի պլանը կատարելու, հնգամյակը յերեք տարում կատարելու խոստում է տալիս: Բայց «դառն փորձը» խրատել է մեղ: Մենք դիտենք վոր խոստումները միշտ չեն, վոր կատարվում են: 1930 թվականի սկզբում նույնպես այդպիսի խոստում եր տրված տարեկան պլանը կատարելու: Այն ժամանակ մեր

И. СТАЛИН  
О ЗАДАЧАХ ХОЗЯЙСТВЕННИКОВ  
Армгиз—Издательство полит. литературы,  
Ереван, 1938

300-87

արդյունաբերութեան արտադրանքը պետք էր ավելացնել 31—32%—ով: Սակայն խոստումը լրիվ չկատարվեց: Արդյունաբերական արտադրանքի աճը 1930 թվականին իրականում կազմեց 25%: Մենք պետք է հարց տանք. իսկ արդյո՞ք այս տարի էլ նույն այդ բանը չի՞ կրկնվի: Մեր արդյունաբերութեան ղեկավարները, աշխատողներն այժմ խոստում են տալիս արդյունաբերութեան արտադրանքը 1931 թ. ավելացնել 45%—ով: Բայց ի՞նչ յերաշխիք, վոր խոստումը կկատարվի:

Ի՞նչ է պահանջվում նրա համար, վորպեսզի կատարենք վերահսկիչ թվերը, վորպեսզի արտադրանքի 45% աճ տանք, վորպեսզի հասնենք հեղափոխիչ վո՛չ թե 4, այլ հիմնական ու վճռողական ճյուղերի վերաբերմամբ 3 տարում կատարելուն:

Մրա համար յերկու հիմնական պայմաններ են պահանջվում:

Առաջին, վորպեսզի զրա համար լինեն ուսուցիչ կամ, ինչպես արտահայտվում են մեզանում, «որյեկտիվ» հնարավորութեաններ:

Յերկրորդ, վորպեսզի մեր ձեռնարկութեաններն այնպես ղեկավարելու ցանկութեան ու շնորհք լինի, վոր այդ հնարավորութեանները կենսապարձվեն:

Անցյալ տարի արդյո՞ք յեղե՞լ են մեզանում «որյեկտիվ» հնարավորութեաններ պլանը լիովին կատարելու համար: Այո՛, յեղե՛լ են: Այս մասին վկայում են անվիճելի փաստերը: Այդ փաստերն այն են, վոր անցյալ տարվա մարտին ու ապրիլին արդյունաբերութեանը նախորդ տարվա համեմատութեամբ ավեց արտադրանքի 31% աճ: Հարց է ծագում, իսկ ինչո՞ւ մենք չկատարեցինք պլանն ամբողջ տարում: Ի՞նչը խանգարեց: Ի՞նչը պակասեց: Պակասեց յեղած հնարավորութեաններն ուղտագործելու շնորհքը: Պակասեց գործարանները, փաբրիկաները, համաձայնարները ոչտորին ղեկավարելու շնորհքը:

Մենք ունեցել ենք առաջին պայմանը՝ «որյեկտիվ» հնարավորութեաններ պլանը կատարելու համար: Բայց մենք բավականաչափ չունեցինք յերկրորդ պայմանը՝ արտադրութեանը ղեկավարելու շնորհքը: Յե՛վ ինչ այն

պատճառով, վոր պակասել է ձեռնարկութեանները ղեկավարելու շնորհքը, հենց այս պատճառով էլ պլանը դուրս յեկավ չկատարված: Փոխանակ 31—32% աճի մենք ավինք միայն 25%:

Իհարկե, 25% աճը մեծ բան է: 1930 թվականին կապիտալիստական վոչ մի յերկիր չի ունեցել և այժմ էլ չունի արտադրանքի ան: Առանց բացառութեան բոլոր կապիտալիստական յերկրներում տեղի ունի արտադրութեան խիստ անկում: Այս պայմաններում 25% անը մի մեծ քայլ է դեպի առաջ: Բայց մենք ավելին կարող եյինք տալ: Դրա համար մենք ունեյինք բոլոր անհրաժեշտ «որյեկտիվ» պայմանները:

Այսպես, ի՞նչ յերաշխիք, թե այս տարի չի կրկնվի անցյալ տարվա դեպքը, թե պլանը լրիվ կկատարվի, թե յեղած հնարավորութեանները մենք այնպես կողտագործենք, ինչպես վոր հարկավոր է ողտագործել նրանց, թե ձեր խոստումը վորոչ մասով չի մնա թղթի վրա:

Պետութեանների պատմութեան մեջ, յերկրների պատմութեան մեջ, բանակների պատմութեան մեջ յեղել են դեպքեր, յերբ հաջողութեան համար, հաղթութեան համար յեղել են բոլոր հնարավորութեանները, բայց նրանք, այդ հնարավորութեանները, ապարդյուն են մնացել, վորովհետև ղեկավարները չեն նկատել այդ հնարավորութեանները, շնորհք չեն ունեցել նրանցից ողտվելու, և բանակները պարտութեան են կրել:

Արդյո՞ք մենք ունե՞նք այն բոլոր հնարավորութեանները, վորոնք անհրաժեշտ են 1931 թվականի վերահսկիչ թվերը կատարելու համար:

Այո՛, այդպիսի հնարավորութեաններ մենք ունենք:

Վորո՞նք են այդ հնարավորութեանները, ի՞նչ է պահանջվում նրա համար, վորպեսզի այդ հնարավորութեաններն իրականութեան մեջ գոյութեան ունենան:

Ամենից առաջ պահանջվում է, վոր յերկրում լինեն բավականաչափ բնական հարստութեաններ՝ յերկաթահանք, ածուխ, նավթ, հաց, բամբակ: Նրանք արդյո՞ք կա՞ն մեզանում: Կան: Ավելի կան, քան ուղածդ ուրիշ յերկրում: Վերցնենք թեկուզ Ուրալը, վորը հարստութեանների մի

այնպիսի կոմբինացիա յե, վորի նմանը վոչ մի յերկրում չի կարելի գտնել: Հանքանյութ, անուխ, նավթ, հաց,—ի՛նչ ասես, վոր չկա Ուրալում: Մեր յերկրում ամեն ինչ կա, բացի թերևս կաուչուկից: Բայց մի յերկու տարուց հետո մենք մեր արամադրության տակ կաուչուկ ել կունենանք: Այս կողմից, բնական հարստությունների կողմից, մենք լրիվ ապահովված ենք: Դրանցից մենք ունենք նույնիսկ ավելի, քան հարկավոր ե:

Ել ի՞նչ ե պահանջվում:

Պահանջվում ե մի այնպիսի իշխանության ապայուքյունը, վորն այդ ահադին բնական հարստությունները ժողովրդի ուրիշ ուղտաղործելն առաջ չարժեքու ցանկություն ե ուժ ունենար: Արդյոք մենք ունե՞նք այդպիսի իշխանություն: Ունենք: Ծշմարիտ ե, բնական հարստություններն ուղտաղործելու մեր աշխատանքը միշտ ել առանց բաղխումների չի անցնում մեր իսկ աշխատողների միջև: Որինակ, անցյալ տարի Սորհրդային իշխանությունն ստիպված չեղավ վորոշ պայքար մղելու յերկրորդ անխամետաղադործական բազա ստեղծելու հարցում, առանց վորի մենք այլևս չենք կարող դարձանալ: Բայց մենք արդեն հաղթահարել ենք այդ արգելքները: Յեվ մենք շուտով այդ բազան կունենար:

Ել ի՞նչ ե պահանջվում:

Մեկ ել պահանջվում ե, վոր այդ իշխանությունը վաճելի բանվորների ու գյուղացիների միլիոնավոր մասսաների աջակցությունը: Արդյոք մեր իշխանությունը վաճելո՞ւմ ե այդպիսի աջակցություն: Այո՛, վաճելում ե: Ամբողջ աշխարհում դուք չեք գտնի մի ուրիշ այնպիսի իշխանություն, վորը վաճելի բանվորների ու գյուղացիների մի այնպիսի աջակցություն, ինչպիսին Սորհրդային իշխանությունն ե վաճելում: Չեմ վկայակոչի սոցիալիստական մրցակցության ամաման փաստերը, հարվածայնության ամաման փաստերը, հանդիպական արդժիպիսի համար մղվող պայքարի կամ պանիան: Այս բոլոր փաստերը, վորոնց մեջ ակնբախորեն յերևում ե միլիոնավոր մասսաների աջակցությունը Սորհրդային իշխանությանը, հանրահայտ են:

Ել ի՞նչ ե հարկավոր, վորպեսդի կատարենք ու դերակատարենք 1931 թվականի վերահսկիչ թվերը:

Հարկավոր ե նաև թի այնպիսի հասարակակարգի առկայությանը, վորն ազատ լիներ կապիտալիզմի անբուժելի հիվանդություններից ե վորը լուրջ առավելություններ տար կապիտալիզմի հանդեպ: Ծգնաժամ, գործազրկություն, շոայլություն, բայն մասսաների աղքատություն—ահա կապիտալիզմի անբուժելի հիվանդությունները: Մեր հասարակակարգը չի տառապում այդ հիվանդություններով, վորովհետե իշխանությունը մեր ձեռքումն ե, բանվոր դասակարգի ձեռքում, վորովհետե մենք պլանային տնտեսություն ենք վարում, պլանաչափ ենք ռեսուրսներ կուտակում ե ճշտորեն ենք դրանք բաշխում ըստ ժողովրդական տնտեսության ճյուղերի: Կապիտալիզմի անբուժելի հիվանդություններից մենք ազատ ենք: Այս ե մեր տարբերությունը, այս ե մեր վճռողական առավելությունը կապիտալիզմի հանդեպ: Տեսեք, թե կապիտալիստներն ինչպես են ուզում դուրս գալ ճգնաժամից: Նրանք առավելագույն չափով իջեցնում են բանվորների աշխատավարձը: Նրանք առավելագույն չափով իջեցնում են հումքի ու պարենամթերքների գները: Բայց նրանք չեն ուզում փոքրիչատե լրջորեն իջեցնել արդյունաբերական շինվածքների գները: Այս նշանակում ե, վոր նրանք ճգնաժամից ուզում են դուրս գալ ապրանքների հիմնական սպառողների հաշվին, բանվորների հաշվին, գյուղացիների հաշվին, այն յերկրների աշխատավորների հաշվին, վորոնք արտադրում են հումք ու պարեն: Կապիտալիստները կարում են այն ճյուղը, վորի վրա նստած են իրենք: Յեվ ճգնաժամից դուրս գալու փոխարեն ստացվում ե նրա սատակացում, ստացվում ե նոր նախադրյալների կուտակում, վորոնք տանում են դեպի նոր, ե՛լ ավելի դաժան ճգնաժամ: Մեր առավելությունն այն ե, վոր մենք չդիտենք գերարտադրության ճգնաժամեր, մենք չունենք և չենք ունենալու միլիոնավոր գործազուրկներ, մենք չունենք անարևիտ արտադրության մեջ, վորովհետե մենք պլանային տնտեսություն ենք վարում: Բայց սա ամենը չե: Մենք ամենահամակենտրոնացված արդյունաբերության յերկիր ենք: Այս նշանակում ե, վոր մենք մեր արդյունա-

բերութիւնը կարող ենք կատուցել ամենալավ տեխնիկայի  
հիմքի վրա և, չնորհիվ սրա, ապահովել աշխատանքի չը-  
տեսնված արտադրողականութիւն, կուտակման չտեսնված  
տեմպ: Մեր թուլութիւնն անցյալում այն էր, վոր այդ  
արդյունաբերութիւնը խաբսխվում էր ցիրուցան և մանր  
դյուրացիական տնտեսութեան վրա: Բայց այդ՝ յեղել է.  
Այժմ այդ այլևս չկա: Վաղը, դուցե, մի տարուց հետո,  
մենք կըստնանք աշխարհում ամենախոշոր դյուրաստեսու-  
թեան յերկիրը: Սորհանտեսութիւններն ու կորստեսու-  
թիւնները, — իսկ նրանք խոշոր տնտեսութեան ձևեր են, —  
արդեն այս տարի տվին մեր սպրանքային ամբողջ հատիկի  
կեսը: Իսկ այս նշանակում է, վոր մեր հասարակահարգը,  
խորհրդային հասարակահարգը, արդէ առաջխաղացման  
այնպիսի հնարավորութիւններ և տալիս մեզ, վորոնց մասին  
բուրժուական վոչ մի յերկիր չի կարող յերագել:

Ել ի՞նչ է պահանջվում, վորպէսզի առաջ շարժվենք  
յոթմիդանոց քայլերով:

Պահանջվում է մի այնպիսի կուսակցութեան առկայու-  
թիւնը, վորը լինի բովանդակաբար համախմբված ու  
միասնական՝ նրա համար, վորպէսզի բանխոր դասակարգի  
բոլոր լավագոյն մարդկանց ջանքերն ուղղի մի կետի, և  
բովանդակաբար վորձված՝ նրա համար, վորպէսզի դժվա-  
րութիւնների դեպքում չչեղվի ճանապարհից, և սխտեմա-  
տիկորեն կենսադործի ճիշտ, հեղափոխական, բոլշեիկյան  
քաղաքականութիւնը: Մենք արդէ ունենք այդպիսի  
կուսակցութիւն: Այո՛, ունենք: Արդէ ճի՞շտ է նրա  
քաղաքականութիւնը: Այո՛, ճիշտ է, վորովհետև նա լուրջ  
հաջողութիւններ և տալիս: Այս բանն այժմ ընդունում են  
բանխոր դասակարգի վո՛չ միայն բարեկամները, այլև  
թշամիները: Մի տեսք, թե մեր կուսակցութեան դեմ ինչ-  
պէս են վոտնում ու դադագում բոլորին հայտնի՝ «հարդելի»  
ջեւղմենները—Ֆիչը՝ Ամերիկայում, Չերչիլը՝ Անգլիայում,  
Պուանկարեն՝ Ֆրանսիայում: Ինչո՞ւ յեն նրանք վոտնում  
ու դադագում: Վորովհետև մեր կուսակցութեան քաղաքա-  
կանութիւնը ճիշտ է, վորովհետև նա տալիս է հաջողու-  
թիւն հաջողութեան հետեից:

Ահա, ընկերներ, այն բոլոր հնարավորութիւնները,

վորոնք մեզ համար հեշտացնում են 1931 թվականի վերա-  
հակիչ թվերի իրականացումը, վորոնք հնարավորութիւն  
են տալիս հնգամյակը կատարելու Ա տարում, իսկ վճարու-  
կան ճյուղերում՝ նույնիսկ Յ տարում:

Այսպիսով, պլանը կատարելու առաջին պայմանը—  
«որչեկտիվ» հնարավորութիւնները, — մենք ունենք առկա:

Արդէ մենք ունենք յերկրորդ պայմանը—այդ հնարա-  
վորութիւններն ոգտագործելու շնորհք:

Այլ կերպ ասած՝ արդէ մենք ունենք Փարրիկաների,  
գործարանների, հանքահորերի ճիշտ դեկավարութիւն: Այս-  
տեղ արդէ ամեն ինչ բարեհաջող փճակում է:

Յալիս սրտի, այստեղ ամեն բան էլ բարեհաջող փճա-  
կում չէ: Յե՛կ մենք, վորպէս բոլշեիկներ, պետք է ասենք  
այդ ուղղակի ու բացահայտ կերպով:

Ի՞նչ է նշանակում արտադրութիւնը դեկավարել: Մե-  
զանում միշտ էլ բոլշեիկներն չեն նայում ձեռնարկութիւն-  
ները դեկավարելու հարցին: Մեզանում հաճախ կարծում  
են, թե դեկավարել՝ նշանակում է թղթեր ստորագրել: Սա  
ցավալի չէ, բայց սա փաստ է: Յերբեմն ահամա հիշում են  
Շչեգրինի պոմպադուրներին: Հիշո՞ւմ էք, թե ինչպէս պոմ-  
պադուրուհին խրատում էր յերիտասարդ պոմպադուրին.  
գլուխ մի՛ կտորի դիտութեան վրա, մի՛ թափանցի գործի մեջ,  
թող ուրիշները սրանով գրազվեն, դա քո գործը չէ, — քո  
գործն է՝ դեկավարել, թղթեր ստորագրել: Պետք է, համոթ  
մեզ, ընդունենք, վոր մեր, բոլշեիկներս, մեջ էլ քիչ չեն  
այնպիսիները, վորոնք թղթեր ստորագրելու միջոցով են  
դեկավարում: Բայց վոր գործի մեջ թափանցեն, տիրապե-  
տեն տեխնիկային, դառնան գործի տերը—այդ՝ յերբեք:

Ի՞նչպէս կարող էր պատահել, վոր մենք, բոլշեիկներս,  
վոր յերեք հեղափոխութիւն ենք կատարել, վոր հաղթու-  
թեամբ ենք դուրս յեկել քաղաքացիական դաժան պատերազ-  
մից, վոր լուծել ենք արդունաբերութիւն ստեղծելու խո-  
շորագոյն խնդիրը, վոր դյուրացութեանը դարձրել ենք  
դեպի սոցիալիզմի ուղին, — ի՞նչպէս կարող էր պատահել,  
վոր արտադրութիւնը դեկավարելու գործում մենք փաս-  
տենք լինում թղթիկի առաջ:

Այստեղ պատճառն այն է, վոր թուղթ ստորագրելն ա-

վելի հեշտ է, քան արտադրութիւնն ղեկավարելը: Յեւլ ահա շատ տնտեսավարներ դնացին նախագաղութն ղիմադրութեան այս դժուր: Այստեղ մեր մեղքն ել կա, կենտրոնի մեղքը: Մի տասը տարի առաջ լոգունդ տրվեց. «Վորովհետեւ կոմունիստներն արտադրութեան տեխնիկան ինչպես հարկն է դեռ չեն հասկանում, վորովհետեւ նրանք դեռ պետք է սովորեն տնտեսութիւնն կառավարել, ուստի հին տեխնիկներն ու ինժեներները, մասնագետները, թող վարեն տնտեսութիւնը, իսկ դուք, կոմունիստներդ, մի՛ խառնվեք դործի տեխնիկային, բայց չխառնվելով, անդադրում ուսումնասիրեցեք տեխնիկան, ուսումնասիրեցեք արտադրութիւնը կառավարելու գիտութիւնը, վորպեսզի հետո արտադրութեան իտեղական ղեկավարները, դործի իտեղական տերերը դառնաք մեզ նվիրված մասնագետների հետ միասին»: Այս եր լոգունդը: Իսկ իրականում ի՞նչ դուքս յեկալ: Այս Ֆորմուլայի յերկրորդ մասը մի կողմ նետեցին, վորովհետեւ սովորելն ավելի դժվար է, քան թղթեր ստորագրելը, իսկ Ֆորմուլայի առաջին մասը դուհակացրին՝ չխառնվելը մեկնաբանելով իբրև հրաժարում արտադրութեան տեխնիկան ուսումնասիրելուց: Անմտութիւնն ստացվեց, վնասակար ու վտանգավոր անմտութիւնն, վորից վորքան շուտ աղտավենք, այնքան լավ:

Ինքը կյանքը քանիցս ազդանշանել է մեզ այս գործում յեղած անբարեհաջողութեան մասին: Շախտի գործն առաջին ազդանշանն էր: Շախտի գործը ցույց տվեց, վոր կուսակազմակերպութիւններին ու արհմիութիւններին պակասել է հեղափոխական գրաստութիւնը: Այդ գործը ցույց տվեց, վոր մեր տնտեսավարները խայտառակ կերպով հետ են մնացել տեխնիկայի տեսակետից, վոր հին տեխնիկներից ու ինժեներներից վոմանք, անկոնտրոլ աշխատելով, ավելի հեշտ են գլորվում վնասարարութեան ուղին, մանավանդ վոր թշնամիներն արտասահմանից անընդհատ նրանց հետապնդում են «առաջարկներով»: Յերկրորդ ազդանշանը «Արդյունաբերական կուսակցութեան» դատաւարութիւնն է:

Իհարկէ, վնասարարութեան հիմքը դասակարգային կռիվն է կազմում: Իհարկէ, դասակարգային ժշնամին

կատաղորեն ղիմադրում է սոցիալիստական հարձակմանը: Բայց վնասարարութեան այդպիսի փարթամ ծաղկումը բացատրելու համար միայն այս մեկը քիչ է:

Ի՞նչպես կարող եր պատահել, վոր վնասարարութիւնն այսպիսի լայն չափեր ստացալ: Ո՞վ է սրա մեղավորը: Սրա մեղավորը մենք ենք: Յեթե տնտեսութիւնը ղեկավարելու գործը մենք այլ կերպ կազմակերպեինք, յեթե մենք շատ ավելի վաղ անցած լինեյինք գործի տեխնիկան ուսումնասիրելուն, տեխնիկային տիրապետելուն, յեթե մենք ավելի հաճախ ու խելացի խառնվեյինք տնտեսութիւնը ղեկավարելու գործին, վնասարարներին չեր հաջողվի այսքան շատ վնաս հասցնել:

Պետք է ինքներս դառնանք մասնագետներ, գործի տերեր, պետք է յերեսներս դարձնենք դեպի տեխնիկական գիտելիքները, — հա թե կյանքը մեզ ուր եր մղում: Բայց վո՛չ առաջին ազդանշանը, վո՛չ ել նույնիսկ յերկրորդ ազդանշանը դեռ չապահովեցին անհրաժեշտ շրջադարձը: Ժամանակ է, վաղուց ժամանակ է, վոր յերեսներս դեպի տեխնիկան դարձնենք: Ժամանակ է, վոր դեն նետենք հին լոգունդը, ժամանակն ապրած լոգունդը տեխնիկային չըխառնվելու մասին, և ինքներս դառնանք մասնագետներ, գործի գիտակներ, ինքներս դառնանք գործի յիսկատար տերեր:

Հաճախ հարցնում են, թե ինչո՞ւ մեկպնոմ միանձնյա ղեկավարութիւնն չկա: Նա չկա և չի լինի, մինչև վոր մենք տեխնիկային չտիրապետենք: Մինչև վոր մեր մեջ, բոլշևիկներին մեջ, չլինեն բազմակի քանակութեամբ այսպիսի մարդիկ, վորոնք լավ ծանոթ են տեխնիկայի, եկոնոմիկայի ու ֆինանսների հարցերին, մենք իտեղական միանձնյա ղեկավարութիւնն չենք ունենա: Ինչքան բանաձևեր ուղում եք՝ գրեցեք, ինչ խոտքերով ուղում եք՝ յերգվեցեք, բայց յեթե չտիրապետեք գործարանի, ֆարբիկայի, հանրահարի տեխնիկային, եկոնոմիկային, ֆինանսներին, բան դուքս չի դա, միանձնյա ղեկավարութիւնն չի լինի:

Հետևաբար, ինդիքն այն է, վոր ինքներս տիրապետենք տեխնիկային, ինքներս դառնանք գործի տերերը: Միայն սրանումն է այն բանի յերաշխիքը, վոր մեր պլանները լրիվ

կիտառովն, իսկ միանձնյա ղեկավարութեանը կիրառութիւնը:

Այս բանը, իհարկե, հեշտ չե՛, բայց միանդամայն հաղթահարելի չե: Գիտութեանը, տեխնիկական փորձառութեանը, գիտելիքները—այս ամենը ձեռք բերելու բաներ են: Այսոր նրանք չկան, իսկ վաղը՝ կլինեն: Գլխավորն այստեղ տեխնիկային տիրապետելու, արտադրութեան գիտութեանը տիրանալու բոլշևիկյան տենչափառ ցանկութեան ունենալն է: Տենչափառ ցանկութեան ղեպքում կարելի չե ամեն ինչի հասնել, կարելի չե հաղթահարել ամեն ինչ:

Յերբեմն հարցնում են, արդյոք չի՞ կարելի մի փոքր զանդազեցնել տեմպերը, մի փոքր հեռ պահել շարժումը: Վո՛չ, ընկերներ՛, չի կարելի: Տեմպերն իջեցնել չի կարելի: Ընդհակառակը, բայց կարողութեան ու հնարավորութեան ներքի՛ նրանք պետք է ուժեղացնել: Այս են պահանջում մեզանից մեր պարտավորութեանները ԽՍՀՄ-ի՝ բանվորների ու գյուղացիների հանդեպ: Այս են պահանջում մեզանից մեր պարտավորութեաններն ամբողջ աշխարհի բանվոր դասակարգի հանդեպ:

Կասեցնել տեմպերը՝ դա նշանակում է հեռ մնալ: Իսկ հեռամնացներին հարվածում են: Բայց մենք չենք ուզում հարվածված լինել: Վո՛չ, չենք ուզում: Հին Ռուսաստանի պատմութեան ելութեանն, ի միջի այլոց, այն եք, վոր նրան հեռամնացութեան համար անդադար հարվածում էլին: Հարվածում էլին մոնղոլական խաները: Հարվածում էլին թյուրքական րեկերը: Հարվածում էլին շիբուական Փեոդալները: Հարվածում էլին լեհ-լիտվական պաները: Հարվածում էլին անգլո-ֆրանսական կապիտալիստները: Հարվածում էլին յապոնական բարոնները: Բոլորը հարվածում էլին հեղափոխութեան համար: Ռազմական հեռամնացութեան համար, կուլտուրական հեռամնացութեան համար, պետական հեռամնացութեան համար, արդյունաբերական հեռամնացութեան համար, գյուղատնտեսական հեռամնացութեան համար: Հարվածում էլին, վորովհետե ղա յեկամտարեր երևանստիժ եր անցնում: Հիշեցեք մինչ-հեղափոխական բանաստեղծի խոսքերը. «Դու ե՛ խեղճ ես, դու ե՛ լիտատ ես, դու ե՛ հզոր ես, դու ե՛ անդոր ես, մայր Ռուսիա»: Հին բանաստեղծի այս խոսքերը լայ էլին սերտել այդ պարոն-

ները: Նրանք հարվածում ու ավերացնում էլին. «դու լիտատ ես», հեռեարար, քչ հաշվին կարելի չե շահվել: Նրանք հարվածում էլին ու ավերացնում. «դու խեղճ ես, անդոր ես», հեռեարար քեզ կարելի չե անպատիժ հարվածել ու կողոպտել: Արդեն այս է շահագործողների սրենքը—հարվածել հեռամնացներին ու թուլլերին: Կապիտալիզմի գալլային սրենքը: Դու հեռ մնացիր, դու թուլլ ես—նշանակում է՝ դու իրավացի չես, ասել է՝ քեզ կարելի չե հարվածել ու սորկացնել: Դու հզոր ես, նշանակում է՝ դու իրավացի չես, ասել է՝ քեզանից պետք է զոռւշանալ:

Ահա թե ինչու մենք այլևս չենք կարող հեռ մնալ:

Անցյալում մենք հայրենիք չենք ունեցել և չեյինք ել կարող ունենալ: Բայց այժմ, յերբ մենք տապալեցինք կապիտալիզմը, իսկ մեզանում իշխանութեանը բանվորական է, —մենք հայրենիք ունենք և պաշտպանելու յենք նրանկախութեանը: Արդյոք ուզո՞ւմ եք, վոր մեր սոցիալիստական հայրենիքն սպանվի, և վորնա կոբցնի իր անկախութեանը: Բայց յեթև այլ չեք ուզում, դուք պետք է ամենա-կարճ ժամանակամիջոցում վերացնեք նրա հեռամնացութեանը և նրա սոցիալիստական տնտեսութեան շինարարութեան գործում զարգացնեք իսկական բոլշևիկյան տեմպեր: Ուրիշ ուղիներ չկան: Ահա թե ինչու յեր Լենինը Հոկտեմբերի ժամանակ ասում. «Կամ մահ, կամ հասնել ու անցնել կապիտալիստական առաջավոր յերկրներից»:

Առաջավոր յերկրներից մենք հեռ ենք մնացել 50—100 տարով: Այս տարածութեանը մենք պետք է կորենք-անցնենք 10 տարում: Կամ մենք այս բանը կանենք, կամ մեզ կճրգմեն:

Ահա թե ինչ են թելադրում մեզ մեր պարտավորութեանները ԽՍՀՄ-ի բանվորների ու գյուղացիների հանդեպ:

Բայց մենք ունենք նաև ուրիշ, ավելի լուրջ ու ավելի կարևոր պարտավորութեաններ: Դա համաշխարհային պրոլետարիատի հանդեպ յեղած պարտավորութեաններն են: Նրանք համբնկնում են առաջին տեսակի պարտավորութեանների հեռ: Բայց մենք նրանց ավելի բարձր ենք դասում: ԽՍՀՄ-ի բանվոր դասակարգը համաշխարհային բանվոր դասակարգի մի մասն է: Մենք հաղթեցինք վո՛չ միայն

ՅՄՀՄ-ի բանվոր դասակարգի ջանքերով, այլև շնորհիվ համաշխարհային բանվոր դասակարգի աջակցութեան: Առանց այդպիսի աջակցութեան մեզ վաղուց կտցահարած կլինեյին: Ասում են, վոր մեր յերկիրը բոլոր յերկրներէ պրոլետարիատի հարվածային բրիգադն է: Սա լավ է ասված: Բայց սա մեզ վրա լրջադուշն պարտավորութեաններ է դնում: Ի սեր ինչի՞ յե աջակցում մեզ միջադրային պրոլետարիատը, ինչո՞վ ենք մենք արժանի դարձել այդպիսի աջակցութեան: Նրանով, վոր մենք առաջինը նեովեցինք մարտի՞ կապիտալիզմի դեմ, մենք առաջինը հաստատեցինք բանվորական իշխանութիւնը, մենք առաջինն սկսեցինք սոցիալիզմ կառուցել: Նրանով, վոր մենք մի գործ ենք անում, վորը հաջողութեան դեպքում՝ շուտ կտա ամբողջ աշխարհը և կազատագրի ամբողջ բանվոր դասակարգը: Իսկ ի՞նչ է պահանջվում հաջողութեան համար: Մեր հետամնացութեան վերացում, շինարարութեան բարձր, բուլշեիկյան տեմպերի զարգացում: Մենք պետք է այնպես առաջ շարժվենք, վոր համայն աշխարհի բանվոր դասակարգը, նայելով մեզ՝ կարողանա ասել. ահա նա, իմ առաջավոր ջոկատը, ահա նա, իմ հարվածային բրիգադը, ահա նա, իմ բանվորական իշխանութիւնը, ահա նա, իմ հայրենիքը, — նրանք լավ են անում իրենց գործը, մեր գործը, — նրանց աջակցենք կապիտալիստների դեմ և բորբոքենք համաշխարհային հեղափոխութեան գործը: Արդ յոք մենք պիտի արդարացնենք համաշխարհային բանվոր դասակարգի հույսերը, պիտի կատարենք նրա հանդեպ մեր ունեցած պարտավորութիւնները: Այո՛, պետք է կատարենք, յեթե մենք չենք ուզում խալառ խայտառակիլել:

Մրանք են մեր ներքին ու միջադրային պարտավորութեանները: Դուք տեսնում եք, վոր նրանք զարգացման բուլշեիկյան տեմպեր են թելադրում մեզ:

Չեմ կարող ասել, թե անտեսութիւնը դեկադարելու տեսակետից մեզանում այս տարիների ընթացքում վոչինչ չի արված: Արված է և նույնիսկ շատ բան է արված: Մրդյունաբերութեան արտադրանքը մինչպատերազմյանի համեմատութեամբ մենք յերկու անգամ ավելացրել ենք: Մենք ստեղծել ենք աշխարհում ամենախոշոր գյուղատնտե-

սական արտադրութիւնը: Բայց մենք ե՛լ ավելի շատ կկարողանայինք անել, յեթե այս ժամանակի ընթացքում աշխատեյինք ինչպես պետքն է տիրապետել արտադրութեանը, նրա տեխնիկային, նրա Ֆինանսատնտեսական կողմին:

Ամենաշատը՝ տասը տարում մենք պետք է կտրենք այն տարածութիւնը, վորով մենք հետ ենք մնացել կապիտալիզմի՝ առաջավոր յերկրներից: Դրա համար մեզանում բոլոր «որեկտիվ» հնարավորութեանները կան: Միայն պահատում է այդ հնարավորութեաններն ինչպես պետքն է ոգտադործելու շնորհքը: Իսկ սա մեզանից է կախված: Միմիայն մեզանից: Ժամանակ է, վոր մենք սովորենք ոգտադործել այդ հնարավորութեանները: Ժամանակ է, վոր վերջ տանք արտադրութեանը չխառնվելու փոսած դիրքավորմանը: Ժամանակ է, վոր յուրացնենք մի այլ, նոր, ներկա ժամանակաշրջանին համապատասխանող գիրքավորում—խառնվելու մեկ ինչի: Յեթե դու գործարանի դերեկտոր ես, խառնվի՛ր բոլոր դործերին, խորամուկ յեղի՛ր ամեն ինչի մեջ, վոչինչ աչքաթող մի՛ անի, սովորի՛ր ու մեկ էլ սովորի՛ր: Բուլշեիկները պետք է տիրապետեն տեխնիկային: Ժամանակ է, վոր բուլշեիկներն իրենք մասնագետներ դառնան: Վերակառուցման ժամանակաշրջանում տեխնիկան մնում է ամեն ինչ: Յե՛վ այն տնտեսավարը, վորը չի կամենում ստուգնասիրել տեխնիկան, վորը չի կամենում տիրապետել տեխնիկային, դա անեկդոտ է, և վոչ թե տնտեսավար:

Ասում են, թե դժվար է տեխնիկային տիրապետել: Ճիշտ չէ: Չկան այնպիսի ամբոցներ, վոր բուլշեիկները չկարողանային վերցնել: Մենք լուծեցինք մի շարք դժվարագույն խնդիրներ: Մենք տապալեցինք կապիտալիզմը: Մենք վերցրինք իշխանութիւնը: Մենք կառուցեցինք սոցիալիստական խոշորագույն ինդուստրիա: Մենք միջակին դարձրինք դեպի սոցիալիզմի ուղին: Շինարարութեան տեսակետից ամենակարեւորը մենք արդեն արել ենք: Մեզ քիչ բան է մնում—ստուգնասիրել տեխնիկան, տիրապետել դիտութեանը: Յե՛վ յերբ մենք այս բանն արած կլինենք, մեզանում այնպիսի տեմպեր կսկսվեն, վորոնց մասին մենք այժմ յերազել էլ չենք համարձակվում: Յե՛վ մենք այդ կանենք, յեթե ուղենանք այդ ինչպես պետքն է:

A. 193 4 15  
AKT № 57  
BIRMAN

Խմբագիր Ռ. Մարտիրոսյան  
Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան  
Սրբագրիչ Վ. Ջիդեջյան  
Կոնսրտ սրբագրիչ Լ. Արսվյան

Գրավիտի լիազոր №4—3332, հրատ. № 613

Պատվեր № 160, տիրած 5.000

Հանձնվել է արտադրության 19/XI 1938 թ.

Ստորագրվել է տպագրելու 8/XII 1938 թ.

Գինը 20 հ. կապեր 20 հ.

Պետհրատ—Քաղաքական գրականության  
հրատարակչության տպարան,  
Յեքեան, Արավերդյան № 65

«Ազգային գրադարան»



NL0184014



ԳԻՆԸ 50 Կ.

595

Հ | Арм.  
3-1466a

И. СТАЛИН  
О ЗАДАЧАХ ХОЗЯЙСТВЕННИКОВ

Армгиз—Издательство полит. литературы,  
Ереван, 1938